



Հ Ո Ր Ե Լ Յ Ա Ն Ա Կ Ա Ն

ՄԱՌԸ ԵՎ ՀԱՅԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1)



յս տարի լրանում է հանճարեղ գիտնական Նիկողայոս Մառի մահվան 15-րդ տարին: Բոլոր երկրների առաջատար գիտնականները հարգանքով են նշում մեծանուն գիտնականի հիշատակը, մի մարդու, որն անդնահատելի մոծոմներ ունի հնագիտության, լեզվաբանության, բանասիրության և ազգագրության բնագավառներում:

Մեծ է ակադ. Մառի երախտիքը նաև հայագիտության ասպարեզում: Կարելի է ասել, որ ակադ. Մառի և նրա աշակերտների ջանքերով է հայագիտությունը դուրս բերվել իր նկարագրական վիճակից և դրվել գիտական լուրջ հիմքի վրա: Ակադ. Մառի անվան հետ են կապված Անիի նշանավոր պեղումները, հայ մատենագրության մի քանի կարևոր երկերի հրատարակությունը և հայ ժողովրդի պատմության և գրականության պատմության բազմաթիվ հարցերի լուսնբանությունը:

Ակադ. Մառը հայագիտական աշխատանքներով սկսել է հանդես գալ 19-րդ դարի 90-ական թվականներին: Նրա առաջին հայագիտական ուսումնասիրությունները, առավելապես, նվիրված են եղել մատենագրական հարցերին: Սկզբնական շրջանի այս աշխատություններից արժեքավոր է Վարդան Այգեկցու առակների ուսումնասիրությունը, որի համար շնորհվել է նրան մագիստրոսի գիտական կոչում: Ակադ. Մառի այս ուսումնասիրությունը, տեքստի հետ միասին, լույս է տեսել 1894—1899 թվերի ընթացքում, երկու մեծածավալ հատորով՝ «Ժողովածոյք առական Վարդանայ» վերնագրով:

1) Համառոտված է պրոֆ. — դոկտ. Ա. Աբրահամյանի համանուն հոդվածից: — ԽՄԲ.

Ակադ. Մառի հայկական մատենագրական գործերից կարելի է մատնացույց անել նաև Հիպոլիտի մեկնությունը, որը լույս է տեսել 1901 թվին: Բարոյախոսը, որը լույս է տեսել 1904 թվին, Ագաթանգեղոսի արաբական հնագույն թարգմանության տեքստը և ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1905 թվականին և այլն:

Ակադ. Մառը հայ մատենագրության ուսումնասիրության ընթացքում նպատակ է ունեցել պարզել հայ գրականության գլխավոր հոսանքները և գրականության փոխազդեցության խնդիրները: Ջանասեր գիտնականը, կատարելապես տիրապետելով բազմաթիվ լեզուների, սկսել է մի ծանր աշխատանք — համեմատական ուսումնասիրություն կատարել հայկական, վրացական, հունական և ասորական մեզ հասած անսպառ գրականության: Պրպտող գիտնականին հաջողվել է համոզեցուցիչ փաստերով ցույց տալ, որ հայ գրականությունը մեկուսացած, կղզիացած ձևով չի զարգացել, այլ գտնվել է գործուն փոխհարաբերության և փոխազդեցության մեջ հարևան գրականությունների հետ: Այսպես, եղել են բնագրեր, որոնք հայերենից են թարգմանվել վրացերեն և, ընդհակառակը, եղել են բնագրեր, որոնք վրացերենից են թարգմանվել հայերեն: Հայկական գրականությունը սերտ փոխհարաբերության մեջ է գտնվել նաև հունարեն, ասորերեն և արաբերեն գրականության հետ:

Ակադ. Մառին հաջողվել է հայ գրականության բազմաթիվ մանր, երկրորդական հարցերից ինտրել և առաջ քաշել արմատական նշանակություն ունեցող հարցեր և շեշտ դնել նրանց վրա: Ակադ. Մառի մատենագրական ուսումնասիրությունները իրենց դրվածքով, իրենց մոտեցմամբ և մանրակրկիտությամբ — հայագիտության լավագույն ուսումնասիրություններից են:

Ակադ. Մառը հայ մատենագրական ու-
սումնասիրության ընթացքում չի բավարար-
վել միայն հանրածանոթ, հրատարակված
տեքստերի ուսումնասիրությամբ: Նա մեծ
շահույթ օգտվել է հայկական ձեռագրերից՝

Պետերբուրգ) հայկական ձեռագրերի ցու-
ցակները: Նրա կարծիքով, մատենագրական
լուրջ ուսումնասիրության համար անհրա-
ժեշտ է նախ հրատարակել ձեռագրերի ցու-
ցակները, ապա կազմել մատենագրերի գի-



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԸ

բացառիկ արժեք տալով նրանց գիտության
համար: Նրա ցանկությունն է եղել հրատա-
րակված տեքստեր հայկական ձեռագրերի ցու-
ցակները: Ինքն անձամբ կազմել և հրատա-
րակել է Սեանի և Լենինգրադի (Նախկին

տալան-համեմատական տեքստերը և նոր
միայն սկսել բանասիրական պրպտումները:
Ակադ. Մառը բացառիկ հոգատարություն
և սրտացավություն է ցուցաբերել դեպի
հայկական ձեռագրերի հավաքումն ու նրանց

պահպանությունը: Այդ տեսակետից բնորոշ է նրա բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանին գրած նամակի հետևյալ սրտացավ տողերը: «Էջմիածնի մատենադարանի վերաբերմամբ պիտի ասեմ, որ նրա ներքին կողմը հավասարապես չի լուսավորված և համոզված եմ, որ շուտավորված կողմում պահվող ձեռագրերն ամենամեծ վնասն են կրում, մասնավաճդ պատի մեջ հարմարվածները: Խոնավ պահեստներից հարկավոր է ձեռագրերը տեղափոխել առանձին պատրաստված պահարանները... Ավա՛ղ, որ ես տկար եմ և անընդունակ գոնյակ հիմա փոքր լումայով ամենասիրելի մատենադարանին օգնություն հասնել, մի քանի հարյուրակ բավական է բոլորովին փրկել շար Ահրիմանի ձեռքից այն թանգարանը, որի իսկական արժեքը գնահատել միայն ապագային է թողված»:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ակադ. Մառը, իր մի քանի աշակերտների հետ միասին, եղել է Արևմտյան Հայաստանում և պատերազմի թո՛հ ու բո՛հի մեջ արել հնարավորը՝ կորուստից փրկելու հայկական ձեռագրերը: Նրա ջանքերով փրկվել են հազարից ավելի հայկական ձեռագրեր:

Ակադ. Մառի անվան հետ է կապված Հայաստանի ամենախոշոր պեղումներից մեկը — Անիի պեղումները: Նա վաղուց մեռած, փոշիների տակ թաղված միջնադարյան այս քաղաքին, կարելի է ասել, կենդանություն տվեց: Նրա հնագիտական էքսպեդիցիան կարողացավ գետնի տակ բաց անել նորանոր շենքեր, ամրոց թաղամասեր, հայտնաբերեց նութական կուլտուրայի բազմաթիվ մնացորդներ և նրանց բարեխիղճ ուսումնասիրության հիման վրա ցույց տվեց մեռած քաղաքի ամրոցական պատկերը անցյալում, մի բան, որ ժլատությամբ են նկարագրում միջնադարյան հայ պատմիչները, հատկապես աշխատավոր խավի դրությունը:

Ակադ. Մառի Անիում կատարած պեղումները, միաժամանակ, ցույց տվին, որ Անին Արևելքի կարևոր կենտրոնավայրերից մեկն է հանդիսացել: Ակադ. Մառն իր ուսումնասիրության արդյունքները հրատարակել է 1934 թվին «ԱԽԵ» վերնագրով մեծածավալ աշխատության մեջ:

Ակադ. Մառն ուսումնասիրել է նաև Գառնիի հիթանոսական տաճարը և Գեղամա լեռներում դրսևված «Ձուկ հսկաներ» կոչված հուշարձանները:

Ակադ. Մառը մեծ երախտիք ունի հայ ժողովրդի պատմության սկզբունքային մի արք հարցերի լուծման ուղղությամբ: Այդ

առթիվ բերենք միայն երեք օրինակ:

Ակադ. Մառը քննադատության ենթարկվելով հայագիտության տրադիցիոն այն դրույթը, որ հայկական գրի և գրականության սկզբնավորությունը 5-րդ դարից է, ապացուցում է, որ հայերը իրենց գիրն ու գրականությունը ունեցել են շատ վաղուց, դեռևս երկրորդ դարում մեր թվականությունից առաջ: Քրիստոնյա հայ մատենագրերն աշխատել են սևացնել նախաքրիստոնեական շրջանի հայ կուլտուրան և գրականությունը:

Քննադատության ենթարկելով արևմտաեվրոպական պատմաբանների այն սխալ դրույթը, որ իբր Անդրկովկասը հանդիսացել է մի դարբաս, կոխառված մի ճանապարհ, որից անարգել եկել և անցել են բազմաթիվ ժողովուրդներ, Մառը ցույց է տվել, որ Այդ ճանապարհը շատ դժվար անցանելի ճանապարհ է հանդիսացել, որ այնքան էլ հեշտ չի եղել ջարդել ազատասեր կովկասյան ժողովուրդների դիմադրությունը, շատ նվաճողների հզորությունը կովկասի լեռներում է ջարդվել:

Առանձնապես կարևոր է ակադ. Մառի հայագիտությանը մատուցած ծառայությունը հայկական լեզվի և հայ ժողովրդի առաջացման առեղծվածը պարզաբանելու հարցերում: Հակառակ հնգնվրդական լեզվաբանների և պատմաբանների առաջադրած սխալ այն դրույթի, որ իբր թե հայ ժողովուրդը տեղաբնակ ժողովուրդ չէ, նա Հայաստան է փկել Թրակիայից, Մառը և նրա աշակերտները, անհերքելի փաստերի հիման վրա պարզել են, որ ինչպես բոլոր ժողովուրդները, այնպես և հայերը առաջացել են անդական ցեղա-տոհմային միավորումներից: Հույն պատմիչների տեղեկությունները Արմենիոս Թեսալացու իր հետևողներով Թրակիայից Հայաստան դաղթելու մասին, առասպել է: Հայ ժողովուրդը կազմվել է տեղաբնակ ցեղերից: Ըստ որում, կազմավորման այդ պրոցեսը շատ բարդ, տեական պրոցես է, նա տեղ է երկար դարեր: Նա սկսվել է 9-րդ դարից և տեղ մինչև 2-րդ դարը մեր դարաշրջանից առաջ:

Կարելի է կանգ առնել ակադ. Մառի հայագիտության ասպարեզում կատարած գիտական ալ մոծումների մասին ևս, սակայն այսքանը բավական է պատկերացնելու մեծանուն գիտնականի տեղը հայագիտության մեջ:

Հայ ժողովուրդը երախտագիտական խորը զգացմունքով է հիշում մեղվաջան ու մեծավաստակ գիտնականին:

